

Հաստատում էմ  
Տեղին՝  
31.08.2023թ.



Մ. Հարությունյան



<<ԱԲՈՎՅԱՆԻ Ն. ՎԱՆՅԱՆԻ  
ԱՆՎԱՆ N5 ՀԻՄՆԱԿԱՆ  
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

**ԴԱՍՂԵՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ  
2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ**

**ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**<<ԱԲՈՎՅԱՆԻ Ն.ՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >>**

**ՊՈԱԿ-Ի << 9գ>> ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿ՝**

**Քրիստինե Մանվելի Հայրապետյան**

**2023-2024 ՈՒՍՏԱՐԻ**

# ԴԱՍԴԵԿԻ ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ),** իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ  
Ի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ը ՈՒ Թ Յ ՈՒ Ն , կետ 74 )

## Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

111. Դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

112. **Սովորողն իրավունք ունի՝**

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ՝ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև դպրոցում ամկա հոսքը, ստանալու վճարովի կրթական ծառայություններ.

3) անվճար օգտվելու դպրոցի ուսումնական կրթական բազայից.

4) ստանալու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բավարարմանն ուղղված աջակցություն.

5) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

6) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի

գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները կամ ոտնձգություն է կատարվում նրա պատվի ու արժանապատվության նկատմամբ.

7) դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

8) ազատորեն փնտրելու և մատչելի կերպով ստանալու ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

9) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

10) խրախուսվելու օրինակելի վարքի կամ բարձր առաջադիմության համար.

11) օգտվելու օրենքով և դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ իրավունքներից:

### 113. **Սովորողը պարտավոր է՝**

1) կատարել դպրոցի կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների ու կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով ու դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

114. Հանրակրթական դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

115. Յուրաքանչյուր սովորող տարեկան առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (կանխարգելիչ) հետազոտություն, որն իրականացվում է դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

116. Դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

117. Դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով ու կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն:

118. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը նոր կարգապահական խախտում թույլ չի տվել և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող:

119. Սույն օրինակելի կանոնադրության 117-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի կիրառվելու դեպքում դպրոցը կարող է դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմին՝ երեխայի համար սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու վերաբերյալ առաջարկությամբ:

120. Սովորողների համար հիմնադրի, նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր` շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

107. Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան` դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու, դրանք դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ ներկայացնելու, սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ:

108. Աշակերտները կարող են նաև ըստ հետաքրքրությունների ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են:

**(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ  
Ի  
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն )**

## Ճնողական խորհուրդ

96. Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:

97. Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

98. Դպրոցի ծնողական խորհրդի նախագահը խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ խորհրդի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

99. Դասարանական և դպրոցական ծնողական խորհուրդների նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է ծնողական խորհուրդների անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

100. Դասարանական ծնողական խորհուրդների նիստերին մասնակցում են դասղեկները, իսկ դպրոցական ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը:

101. Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և դասղեկների նախաձեռնությամբ՝ կարող են հրավիրվել արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:

102. Դպրոցի ծնողական խորհուրդը՝

1) դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կազմից առաջադրում է խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուն:

2) դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ:

3) աջակցում է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում:

4) ներկայացնում է ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, մասնակցում դրանց մշակման և տրամադրման միջոցառումներին:

5) լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները:

6) ամրապնդում է դպրոցի և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության նկատմամբ ձևավորում է միասնական պահանջներ:

7) ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում:

8) օգնում է դպրոցին՝ սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում:

9) մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների.

10) մասնակցում է ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին.

11) աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը.

12) ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում.

13) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ.

14) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը:

103. Դպրոցի ծնողական խորհուրդը համագործակցում է դպրոցի մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

104. Դպրոցի ծնողական խորհուրդը կարող է տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկ ներկայացնել դպրոցի խորհրդին:

105. Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները: Համադպրոցական և դասարանական ծնողական ժողովների նիստերի արձանագրությունները և ընդունված որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են դպրոցի կայքէջում:

106. Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար դպրոցի ծնողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ լիազորություններ:

**(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ  
Ի  
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն )**

# ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՉԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1.ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ (ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)



Յուրաքանչյուր դասարան մի փոքրիկ ընտանիք է, որտեղ երեխան ստանում է հոգևոր, մշակութային և ազգային դաստիարակություն...

Ուսումնական գործընթացն ավելին է, քան պարզապես դասապլաններ ստեղծելն ու դրանք աշակերտներին փոխանցելը:

Ուսուցման միջավայրը նույնքան կարևոր է, որքան այն, ինչ ուզում եք սովորեցնել: Ավելին՝ առանց դրական միջավայրի դժվար թե կարողանաք ինչ-որ արդյունքի հասնել:

Դասարանային մշակույթը ենթադրում է այնպիսի միջավայրի ստեղծում, որտեղ սովորողներն իրենց զգում են ապահով, ազատ, ընդունված, ներառված ամեն ինչում և սովորում են պատասխանատվություն ստանձնել իրենց կատարած քայլերի համար:

Դասարանային դրական մշակույթի ստեղծումն անմիջականորեն կապված է սոցիալ-հուզական ուսումնառության 5 կարևոր բաղադրիչների հետ՝ ինքնաճանաչում, ինքնակառավարում, սոցիալական իրազեկվածություն, փոխհարաբերությունների կառուցում, պատասխանատու որոշումների կայացում:




**2.ՈՒՄՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՄ ՏԱՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Կրթության հիմնասյուններն են գիտելիքը, հմտությունները, արժեքները, վերաբերմունքը վարքագծի վրա, որոնք հնարավորություն են տալիս անհատներին սովորել սովորեցնել, սովորել համագործակցել, միասին լուծումներ գտնել, միասին ապրել մի աշխարհում, որը բազմազան է և լի բազմակարծությամբ:

Ձևավորել վաղվա ակտիվ քաղաքացուն, ով կկարողանա փոփոխություններ բերի իր կյանքում, իր համայնքի առօրյայում եվ իր երկրի զարգացման համար, ով առաջնորդվում և ապրում է ժողովրդավարության արժեքներով ու սկզբունքներով, Չայրենասեր է, հոգ է տանում իր, իր ընտանիքի , համայնքի բարեկեցության համար և փորձում է բարելավել իր անձնական եվ հանրային կյանքը, Կարող է կայացնել իր ապագայի վերաբերյալ պատասխանատու որոշումներ:

Ստեղծել դրական միջավայր

Ձայնը լսելի է, յուրաքանչյուր կարծիք հաշվի է առնվում

ուսուցիչը իր վարքագծով օրինակ է սովորողին

ապրումակցող եվ հոգատար միջավայր է ստեղծված

Նպաստում է ինքնաճանաչողությանը եվ անձնային որակների զարգացմանը

սովորողները կիրառում են սովորածը,

փորձարկում են առանց վախենալու սխալվելուց

հետադարձ կապը համարում են սովորելու հնարավորություն

հարցեր տալը խրախուսվում է:

### **3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

#### **3.1. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:  
Ծանոթացնել հայ առաքելական եկեղեցու պատմությանը: Կատարել պատմական  
ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Այցելել  
պատմամշակութային վայրեր, եկեղեցիներ:

#### **3.2. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**



Նպաստել սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Ձևավորել գեղեցիկը տեսնելու, գնահատելու, արժևորելու կարողություններ: Ծանոթացնել ազգային ավանդույթներին, տոներին: Կազմակերպել բնության զարթոնքին նվիրված միջոցառումներ: Աշակերտների հետ ստեղծել դասարանական անկյուն, պաստառներ, թեմատիկ նկարներ:

Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը: Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:

**3.3.ՌԱԶՄԱՐԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ճանութացնել հայ ժողովրդի հերոսական անցյալին: Սերմանել հարգանք , սեր հայրենիքի ,ազատամարտիկների , նորոյա հերոսների սխրագործությունների նկատմամբ: Նպաստել ազգային մտածելակերպի ձևավորմանը: Խոսել Արցախյան պատերազմի մասին: Չրույց-քննարկում կազմակերպել նորոյա հերոսների մասին:

### **3.4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Չետնել աշակերտների առողջությանը, ֆիզիկական պատրաստվածությանը, կեցվածքին, քայլվածքին, կազմակերպել սպորտլանդիաներ: Նպաստել աշակերտների ֆիզիկական ներդաշնակ զարգացմանը, բարձր աշխատունակության բարձրացմանը: Սովորեցնել հետնել անձնական հիգիենային:

### **3.5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Սերմանել դրական վերաբերմունք , սեր աշխատանքի նկատմամբ , սովորեցնել գնահատել ուրիշի աշխատանքը, պահպանել դպրոցական գույքը: Մասնակից դարձնել հանրագուտ աշխատանքին Կազմակերպել դասարանական հերթապահություն, սովորեցնել խնամել ծաղիկները, մաքուր պահել դասասենյակը,:

### **3.6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Չարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ : Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ, գրույցներ «Երկրագունդը մեր տունն է >> խորագրով:

Բնապահպանական դաստիարակությունը նպատակ ունի երեխայի մեջ ձևավորելու

ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, Էկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, Էկոլոգիական կուլտուրա:



### 3.7. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կազմակերպել ծնողական ժողովներ: Փոխկապակցված պահել դպրոց-ընտանիք շղթան: Քննարկել համատեղ լուծման խնդիրներ, կազմակերպել մանկավարժական խորհրդատվություններ, ձևավորել երեխայի դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ, հայացքներ:



**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողն ը
1ին շաբաթ	2րույց՝ «Գիտելիքի օրվա խորհուրդը» Դասարանային մշակույթի ստեղծում:	Սեպտեմբ երի  1	Դասղեկ , աշակերտն եր
2-րդ շաբաթ	Քննարկել և հաստատել դասարանային կանոններ, սահմանել դասարանի համար տեսլական:	Սեպտեմբե րի 9	Դասղեկ , աշակերտն եր
3րդ շաբաթ	Ա.Հրավիրել դասարանի ծնողական ժողով,  ընտրել ծնողական խորհուրդ, խորհրդի  նախագահ և անդամներ:  Բ. Կազմել, քննարկել և հաստատել ծնող-  խորհրդի աշխատանքային պլանը 1-ին և  2-րդ կիսամյակների համար:	Սեպտեմբե րի մինչև 15	Դասղեկ ծնողներ
4-րդ շաբաթ	<<Ես քո ապագան եմ, իմ երկիր>> թեմայի քննարկում ,	Սեպտեմբե րի 16-20	Դասղեկ , գինղեկ, աշակերտն

	ստեղծագործական աշխատանք:		եր:
5	«Մեր օրերի ուսուցիչը» խորագրով քննարկում, կարծիքների փոխանակում	Յուլի 5-ից 10	Դասղեկ, աշակերտներ, դպրոցի ուսուցիչներ:
6	Զրույց՝ «Ինձ համար կարևոր է ու հետաքրքիր ...» թեմայով:	Յուլի 15-25	Դասղեկ , աշակերտներ
7	Զրույց՝ «Ընկերասիրություն» թեմայով:  «Լավ ընկերը լավ խորհրդատու է և լավ ուսուցիչ»:	Նոյեմբերի 26--29	Դասղեկ , աշակերտներ, զուգահեռ դասարանի աշակերտներ:
8	Յուրաք. աշակերտ իմանա իր պարտակ. և կատարի բարեխղճ.	Դեկտեմբերի 1-7	Դասղեկ , աշակերտներ
9	Ծանոթ.հայկական ավանդ. տոներին և նրանց դերին, նշան.	Դեկտեմբերի 8-12	Դասղեկ , աշակերտներ



10	Յին հայկական Ամանոր	Դեկտեմբերի վերջ	Դասղեկ , աշակերտներ
11	ՅՅ քաղաքացի	Յունվար	Դասղեկ , աշակերտներ
12	Յայոց բանակ	Յունվար	Դասղեկ , աշակերտներ
13	Մեր հերոսները		Դասղեկ , աշակերտներ
14	Յայ հայտնի կնայք		Դասղեկ , աշակերտներ
15	Հաբաթ/2օր		
	Երկրորդ կիսամյակ/19 շաբաթ		
1	<b>1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:</b>		Դասղեկ , աշակերտներ

2	Ինչպես օգնել մարդկանց	Փետրվար	Դասղեկ , աշակերտներ
3	Ընտանեկան ավանդույթներ	Փետրվար - մարտ	Դասղեկ , աշակերտներ
4	Խոսք ես տվել, կատարի՛ր	Մարտ	Դասղեկ , աշակերտներ
5	Կարողանանք լսել միմյանց	Ապրել	Դասղեկ , աշակերտներ
6	Փրկենք երկիր մոլորակը		Դասղեկ , աշակերտներ
7	Լինենք բարեկիրթ		Դասղեկ , աշակերտներ
8	Բարեկամությունն սկսվում է ժպիտից		Դասղեկ , աշակերտներ
9	Ճանաչիր քո հայրենիքը ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱ ԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔ		Դասղեկ , աշակերտներ

			եր
10	Օրը սկսենք «բարև»-ով		Դասղեկ , աշակերտն եր
11	Լինենք հարգալից		Դասղեկ , աշակերտն եր
12	Պահպանենք բնությունը		Դասղեկ , աշակերտն եր
13	Դպրոցը երեխայի կանքում		Դասղեկ , աշակերտն եր
14	Լավ դաստիարակության տասը կանոն		Դասղեկ , աշակերտն եր
15	Ներգրավել ծնողներին դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում		Դասղեկ , աշակերտն եր
16	Աշակերտական ինքնավարություն		Դասղեկ , աշակերտն եր
17	Միջանձնային հարաբերությունների բարելավում		Դասղեկ , աշակերտն եր














Ղապունական միջոցառումներ

№	ԱՅԿԱՑԱԿ ԺԱՄԵՆ	ՄԻՋՈՑՈՒՄ ԱՎԱՆՈՒՄ	№	ՂԱՄԵԿ ԲԱՅՂԱԵՐ
1.			1.	Իմ իրավունքերը /միասնական շաբաթ, 2023թ. հոկտեմբեր/
2.			2.	
3.			3.	
4.			4.	
5.			5.	
6.			6.	

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ,  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ**

	<b>Նախասիրական- առարկայական խմբակ</b>	<b>Գեղարվեստական, երաժշտական խմբակ</b>	<b>Մարզական խմբակ</b>	<b>Այլ խմբակ</b>
<b>1</b>				
<b>2</b>				
<b>3</b>				
<b>4</b>				
<b>5</b>				
<b>6</b>				
<b>7</b>				
<b>8</b>				
<b>9</b>				
<b>10</b>				
<b>11</b>				
<b>12</b>				
<b>13</b>				
<b>14</b>				
<b>15</b>				
<b>16</b>				
<b>17</b>				
<b>18</b>				
<b>19</b>				
<b>20</b>				

21				
22				
23				
24				
25				
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				
34				

**ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՃԻԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ**

<b>Անցկացման և օրը</b>	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, Էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	<b>Ճանապարհորդություն</b>
01.09.2022	Դասախոսություն միասնական մտածողության մասին:	
	<ul style="list-style-type: none"> <li>Ճանապարհորդություն ծնողներին և ուսուցիչներին հետ, որոնցով ընթանում է դասը:</li> </ul>	

	<ul style="list-style-type: none"> <li>• Տույց տալ, թե ինչպես կարող է ծնողը ուղղորդել աշակերտին տանը հանձնարարությունները կատարելիս:</li> <li>• Արդյունավետ հարաբերությունների ամրապնդում ծնող-աշակերտ-ուսուցիչ եռանկյունու համար:</li> </ul>	
	Սոցիալ- հուզական բաղադրիչների ստեղծում	
	Գնահատել ծնողների ներգրավվածության կարևորությունը կրթական պրոցեսին	
	Հաղորդակցման բարելավում	
	Անհատականացում	
	Երեխայի եւ ընտանիքի մասին տեղեկատվություն ստանալու հարցաշարերի ստեղծում:	
	Բաց դռների օրվա պլանավորում:	
	Երկխոսության սկզբունքով տարբեր թեմաների շուրջ պլանավորված հանդիպումների կայացում:	
	<ul style="list-style-type: none"> <li>• «Ընտանեկան կինոակումբ» և «Ընտանեկան</li> </ul>	

	ընթերցանության օր»	
	<< Մենք ձեր ընտանիքում>>	
	Դասարանային դրական մշակույթի ստեղծման և ամրապնդման ռազմավարություններ	
	սովորում են կարգավորել իրենց զգացմունքները և կառավարել ամենօրյա սթրեսները:	
	<ul style="list-style-type: none"> <li>• Մշակե՛ք հետևանքներ և խրախուսանքներ:</li> <li>• Եղե՛ք հետևողական և արդար:</li> </ul>	
	Սովորում է հասկանալ այլ մարդկանց զգացմունքներն ու մտահոգությունները, նայել իրերին նրանց տեսանկյունից, գիտակցել, որ մարդկանց տեսակետները նույն երևույթի վերաբերյալ կարող են տարբեր լինել:	
	Սովորում է զարգացնել և պահպանել այլոց հետ առողջ հարաբերություններ, մասնակցել համատեղ ուսումնառությանը, լուծել միջանձնային կոնֆլիկտները, օգնություն խնդրել կարիքի դեպքում և այլն:	





Ժամկետները	անուն	և աշխատանքների մեթոդների, մանկավարժակ ան հնարքների համառոտ բովանդակությունը	և աշխատանքների արդյունքը	տեղեկութ յուններ
29,09.2022	<b>Բադաղյան Արման</b>	<b>Արցախից տեղահանված աշակերտ, սոցիալ- հոլզական աջակցության կարիք</b>	<b>Անհատական հանդիպում աշակերտի և ծնողի հետ:</b>	




**ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ**

Դասալսման օրը	Առարկան և դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը
29.09.2022	<b>Ֆիզիկա/ Յ. Համբարձումյան</b>		<b>Աշակերտների պատրաստվածուք- յան ստուգում</b>


**ՆՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ**

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
<b>09.10.2022թ.</b>	<b>Ծնողխորհրդի կազմի ընտրություն</b>	<b>Ծանոթություն ծնողների հետ</b>	




